Զանգվածի էմի

Bookmark

Անի Քոչար

Հանկարծակի չկամ

Ինչպես պայքարել,
երբ թվում է՝ հույս չկա:

new mag

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 821.19-94 Ռոչար
ԳՄԴ 84(5Հ)-4
Ռ 821

Ռ 821 Ռոչար Անի
Հանձնվել չկա՛/ Անի Ռոչար.- Եր.: Newmag, 2020.- 160 էջ:

2018-ի մայիսին Անին պարզում է, որ արյան քաղցկեղ ունի: Գերմանիայում բնակվող մորն այս շոկային լուրն անհավանական է թվում: Բայց բժիշկները խորհուրդ են տալիս բուժումը սկսել առանց հապաղելու: Այնքան հապշտապ է արվում ամեն ինչ, որ նույնիսկ գործերը կարգի բերելու ժամանակ չի լինում:

Հոսպիտալացումից 2 օր անց պարզվում է, որ Անիի արյան քաղցկեղն ամենաբարդ տեսակն է: Ապաքինման հավանականությունը շատ ցածր էր: Այնուամենայնիվ, նա որոշում է սկսել ու շարունակել բուժումը: Կանցնի մի քանի ամիս, և Անին կորոշի դադարեցնել բուժումն ու գնալ տուն...

Վավերագրությանը բնորոշ անկեղծությամբ գրված այս դրամատիկ հուշագրությունը ներկայացնում է երիտասարդ կնոջ պայքարի բարդ ուղին, բախտորոշ որոշումներ կայացնելու դժվարությունները, ծանր մտորումները կյանքի ու մահվան սահմանագծին:

Այս պատմությունը չափազանցված չէ, դեպքերն ու դեմքերը փոփոխված չեն: Հեղինակը փոխանցում է իր անձնական փորձը, որը կարող է հուզել, վախեցնել, բայց նաև ոգևորել և օրինակ ծառայել: Առաջին անգամ հայ կինը հրապարակավ խոսում է իր ամենածանր հիվանդության, ամենակուլ վախի ու ամենամեծ հաղթանակի մասին:

ՀՏԴ 821.19-94 Ռոչար
ԳՄԴ 84(5Հ)-4

ISBN 978-9939-9217-9-2
Հանձնվել չկա՛ © 2020 Անի Ռոչար, «Նյու Մեգ» ՍՊԸ
Հեղինակի լուսանկարը՝ Դանիել Ղազարյանի
Ֆոտոսեսիային հեղինակի դիմահարդարումը՝ Make-Up Studio-ի
Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

ԻՆՉՈՒ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Ես թերևս կորոնավիրուսով վարակված ամենահայտնի հայ վլոգերներից մեկն եմ: Ես համացանցում պատմում էի, թե ինչպես եմ վարակվել, ինչպես է ընթանում բուժումը, ինչպես է անցնում առօրյան: Այդ տեսանյութերի հրապարակումից հետո ինձ շատերը հարցնում էին՝ պե՞տք էր լինել այդչափ անկեղծ ու բաց (հատկապես որ տեսանյութերը տարածվեցին և՛ սոցցանցերում, և՛ ավանդական մեդիայում): Չէ՞ որ գործարար եմ և քոուչ, ու գուցե իմ հաճախորդներն ու ուսանողները խուսափեն ինձ հետ շփվելուց:

Սակայն իմ վլոգի նպատակը բոլորովին այլ էր: Ես հասկանում էի, որ Հայաստանում և աշխարհում ձևավորվել էր վարակի հանդեպ անառողջ վերաբերմունք: Վարակակիրները կարծես խարան ունենային, որից պետք է ամաչեին ու որը պիտի գաղտնի պահեին: Ավելի վատ էր այն վարակվածների վիճակը, որոնք քրոնիկ հիվանդություններ ունեին և հիվանդանոցում հայտնվել էին դատապարտվածի սարսափն աչքերում:

Ահա դա տեսնելով որոշեցի պատմել իմ բուժման մասին: Մարդիկ պե՛տք է տեսնեն, որ հնարավոր է բուժվել, հնարավոր է ապաքինվել՝ ի հեճուկս նույնիսկ ծանրագույն հիվանդությունների: Ամեն ինչ մեր ձեռքում է:

Իսկ այժմ ձեր ձեռքին Անիի գիրքն է: Մի խիզախ հայուհու, որը չվախեցավ իր հիվանդությունից: Ավելին, շարունակեց բուժումը, երբ նույնիսկ Գերմանիայի լավագույն բժիշկներն էին կասկածում բուժման հնարավորությանը: Նա շարունակեց պայքարը, որից սովորաբար հրաժարվում են շատերը:

Արտակարգ պատահարները, բնական աղետները, պատերազմները, վարակներն ու հիվանդությունները կարող են կոտրել յուրաքանչյուրիս ճակատագիրը: Այդ պատճառով յուրաքանչյուր ոք պետք է ունենա ապրելու իր հավատամքը, պայքարի իր բանաձևը:

newmag-ի այս նախաձեռնությանը միացա և այս գրքի հրապարակմանն աջակցեցի ինձ համար շատ կարևոր պատճառով: Այս գիրքն ունի պարզ, բայց շատ կարևոր ուղերձ: Ուղերձ, որը հարազատ է նաև ինձ: Ուղերձ, որը երաշխավորում է ոչ միայն բարեհաջող ելքը, այլև արժանապատիվ ընթացքը: Ուղերձ, որը կարող է կյանքի հանդեպ մեծ սեր արթնացնել ընթերցողի սրտում: Եթե ամենածանր պահին, ամենադժվար ժամանակներում, ամենամռայլ օրերին որոշեք պայքարել, հաստատ կհաղթեք: Որովհետև հանձնվել չկա՛:

Բարի ընթերցում:

Մուշեղ Ավետիսյան
Գործարար և քոուչ

Bookmark

Բովանդակություն

	Նախաբան	11
Գլուխ 1	Մայիսի 25, 2018	13
Գլուխ 2	Պայքարում եմ, ուրեմն կամ	27
Գլուխ 3	Դու մենակ չես	43
Գլուխ 4	Նոր փորձառություն	55
Գլուխ 5	Արձակուրդ	67
Գլուխ 6	Երկրորդ փուլ	79
Գլուխ 7	Իմ չապրած ամառը	91
Գլուխ 8	Մեկը՝ բոլորի դեմ	105
Գլուխ 9	Երկու կարծիք	119
Գլուխ 10	Որոշումը՝ ապրել	131
	Եվ վերջում	143
	Երախտագիտության խոսք	145

Bookmark

Փոքրիկ Մանեի հիշատակին

Bookmark

ՆԱԽԱԲԱՆ

– Ալո, Ֆրաու Քոչար, Բիլեֆելդի ոստիկանությունից է:

– Այո, լսում եմ:

– Դուք այսօր առավոտյան արյան անալիզ հանձնել եք:

– Այո, ինչո՞ւ:

– Ոստիկանություն է դիմել այն լաբորատորիայի բժշկուհին, որտեղ ուղարկվել են Ձեր արյան նմուշները: Եվ քանի որ Ձեր ընտանեկան բժիշկն այս ժամին արդեն տեղում չէ, հրատապության պատճառով դիմել են մեզ, որպեսզի օգնենք Ձեզ գտնել: Սակայն Ձեր տվյալները փոխանցելու իրավունք չունեինք, այդ պատճառով էլ մեզ տվեցին իրենց հեռախոսահամարը:

– Լավ, հենց հիմա կզանգահարեմ:

* * *

– Ալո, ներեցեք, ես Անի Քոչարն եմ, Դուք...

– Այո, լավ է, որ զանգահարեցիք, ես սպասում էի: Անի՛, շտապ այցելեք մոտակա հիվանդանոց, Դուք առողջական լուրջ խնդիրներ ունեք:

– Բայց ինչ:

– Ես իրավունք չունեմ որևէ ախտորոշում հայտնելու, բայց շատ լուրջ է, իսկ առջևում հանգստյան օրեր են, չարժի հեռաձգել, դրա համար էլ փնտրում էինք Ձեզ:

– Հա, բայց ինչ է, ես միայնակ մայր եմ և որդուս չեմ կարող հենց այնպես թողնել ու գալ հիվանդանոց:

– Առավել լուրջ է, քան Դուք կարող եք պատկերացնել:

– Ինչ է:

– Դուք արյան քաղցկեղ ունեք:

Bookmark

Գլուխ 1
ՄԱՅԻՍԻ 25, 2018

Ճակատագրի հեգնանք

Շունչս կտրվում է, սիրտս՝ խփում արագ: Ականջներս խըշշում են: Ոչինչ այլևս չեմ լսում: Հագնվում եմ մեխանիկորեն: Մեխանիկորեն իմ կյանքը կիսվում է երկու մասի՝ զանգից առաջ ու զանգից հետո: Զանգից առաջ: Փորձում եմ հիշել: Տղայիս հետ դասերը պատրաստեցինք, ճաշեցինք, ինձ թույլ էի զգում: Հյուրասենյակում ենք: Ես պառկած եմ, տղաս ու զարմուհիս «բժիշկ-բժիշկ» են խաղում: Հիվանդը ես եմ: Տղաս ասում է՝ ես քո բժիշկն եմ, մայրի՛կ, ու հիմա քեզ կբուժեմ: Զարմուհիս բուժքրոջ դերում է: Միասին բժշկում են ինձ: Հետո փակ համարից զանգ կգա: Կհապաղեմ պատասխանել: Ներքին մի ձայն կհուշի՝ կարևոր է...

Հեռախոսն անջատում եմ: Շունչս կտրվում է, սիրտս՝ արագ խփում: Քրոջս ասում եմ, որ տղայիս նայի, հավանաբար ուշ կգամ այսօր: Աչքերս թաց են: Քույրս զգուշորեն հարցուփորձ է անում: Չի հավատում լսածին: Պնդում է, որ չհուզվեմ, որ ամեն ինչ կպարզվի, որ հավանաբար սխալմունք է: Ու երկուսով լաց ենք լինում: Ինքը՝ տանը, ես՝

ճանապարհին: Ու դեռ չգիտեմ, ոչ էլ գիտակցում եմ, որ այլևս երբեք առաջվանը չեմ լինելու:

Հիվանդանոց

Հասնում եմ ընդունարան՝ մտովի անընդհատ կրկնելով, որ հավանաբար սխալմունք է: Սպասում եմ հերթապահ բժըշ-կին: Արյան անալիզն են կրկնում: Տալիս են շատ հարցեր՝ ինչպե՞ս եմ ինձ զգացել վերջին ամիսներին, ի՞նչ գանգատ-ներ ունեմ: Պատմում եմ, որ ինքնազգացողությունս թույլ էր, շարունակ ինձ հիվանդ եմ զգացել, ասես մշտական հարբուխ ունենայի. կոկորդս էր ցավում, ջերմում էի, նաև գլխացավեր և ստամոքսացավեր ունեի, ընդերից արնահո-սություն, և, ի վերջո, մարմնիս կապտուկներ էին հայտնվում՝ առանց հարվածի, առանց որևէ պատճառի, հատկապես վերջույթներիս:

Պատմում եմ ու տեսնում բժշկի աչքերում մեծացող հա-մոզումը. նախնական ախտորոշումը ճիշտ է: Քիչ անց ներս կմտնի բուժաշխատակիցը, բժշկին ինչ-որ թղթեր ցույց կտա: Կնայեն ինձ, կճշտեն՝ արդյոք իմ որդին հուսալի ձեռքերո՞ւմ է, ունի՞ այլ խնամող: Ոչ մեկ օրվա համար: «…Դուք այստեղ մնա-լու եք երկար, շատ երկար»:

Գլխավոր բժիշկը

Տարեց մարդ էր:

– Արյան լեյկոզը հաստատվեց,– ասում է չափավոր տխրու-թյամբ: – Քիչ ուշ կիմանանք առավել հանգամանալից հետա-

զոտությունների արդյունքներն ու Ձեզ կտեղեկացնենք ենթատեսակի ու բուժման ընթացքի մասին:

Հարցնում եմ.

– Հիմա ինչքա՞ն պետք է մնամ այստեղ:

– Նախ մեկ-երկու ամիս,– պատասխանում է հանգիստ:

– Իսկ ընդհանո՞ւր բուժումը:

– Եթե ամեն ինչ լավ ընթանա, ապա մեկ տարի:

Եթե ամեն ինչ լավ լինի: Ականջներս խշշում են: Լսում եմ ու չեմ հավատում: Միլիոն հարց ունեմ: Ոչ միայն բժշկին, որ շտապում է եզրափակել զրույցը՝ ասելով, որ դեռ շատ հետազոտություններ պիտի արվեն:

– Բուժումն արագ ու հեշտ չի լինի,– ասում է,– անցնելիք ճանապարհ ունենք՝ երկար ու ոչ դյուրին: Մոռացեք ճամպրուկային տրամադրությունը, պառկեք հանգիստ: Արցունքներս հոսում են: Պառկե՞մ հանգիստ:

Անծանոթները

Որդուցս չեմ բաժանվել երբեք: Ես չգիտեմ, թե ինչպես են ժամանակը սպանում: Երբեք անգործ չեմ եղել: Ես սիրում եմ պրպտել, գտնել, սովորել, շարժման մեջ լինել: Ես տեղում կանգնել չգիտեմ: Կանգնում եմ, երբ հարկ է ձեռք մեկնել մեկ ուրիշին՝ բարձրացնելու և նորից առաջ սլանալու համար: Ես վազող մարդ եմ, որը միշտ ասում էր՝ կհանգստանամ շիրմաքարի տակ, հիմա պետք է գործել, կյանքն ախր եռում է:

Եվ ինձ ասում են՝ պառկեք հանգիստ, ֆրաու Քոչար:

Ներեցեք, բայց ես ու հանգստությունը չենք ճանաչում իրար: Մենք անծանոթներ ենք: